

# «Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի ապրիլի 26-ի N 498-Ն որոշման մեջ լրացում և փոփոխություն կատարելու մասին» Կառավարության որոշման նախագիծ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

#### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ

#### 26-Ի N 498-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» օրենքի 27-րդ հոդվածի 6-րդ մասը և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները՝ Կառավարությունը **որոշում է**.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի ապրիլի 26-ի «Քաղաքացիության հարցերով միջգերատեսչական հանձնաժողովի կազմավորման և գործունեության կարգը սահմանելու մասին» N 498-Ն որոշման (այսուհետ՝ Որոշում) հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները.

1) Հավելվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 7.1-րդ կետով.

«7.1. «Հանձնաժողովի քարտուղարությունն ապահովում է Վարչապետի աշխատակազմի [Ներման, քաղաքացիության, պարզևների և կոչումների շնորհման բաժինը](#) (այսուհետ՝ Բաժին): Հանձնաժողովի քարտուղար նշանակվում է սույն բաժնի աշխատակիցներից: Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը ստանալու կամ դադարեցնելու վերաբերյալ դիմումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության կազմած եզրակացությունները «Հայաստանի Հանրապետության Քաղաքացիության մասին» օրենքի 27-րդ հոդվածի 2-րդ մասին համապատասխան՝ ի դեմս Հանձնաժողովի ուղարկվում են Բաժին:

2) Որոշման հավելվածի 9-րդ կետի առաջին նախադասության «հանձնաժողովում» բառը փոխարինել «Բաժնում» բառերով:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը

հաջորդող օրվանից: